

Հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները և ապահովելով հանրաքվեի քարոզարշավին մասնակցող ՀՀ Ազգային Ժողովի խմբակցությունների /պատգամավորական խմբերի/ համար ոչ խտրական պայմաններ՝ "Արմենիա Թի-Վի" հեռուստաընկերությունը հրապարակում է 2015թ. դեկտեմբերի 6-ին կայանալիք ՀՀ սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում քարոզարշավին մասնակցող ՀՀ Ազգային Ժողովի խմբակցություններին /պատգամավորական խմբերին/ տրամադրվող եթերաժամի մասին տեղեկատվությունը:

Հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում քարոզարշավին մասնակցող ՀՀ Ազգային Ժողովի խմբակցություններին /պատգամավորական խմբերին/ տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանվում է 110 000 /մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Հանրաքվեի քարոզարշավին մասնակցող ՀՀ Ազգային Ժողովի յուրաքանչյուր խմբակցությանը /պատգամավորական խմբին/ քարոզչության ամբողջ ժամանակահատվածում, ամեն օր ժամը 18:00-ից մինչև 20:00, կարող է տրամադրվել առավելագույնը 6 րոպե եթերաժամանակ:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

